ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 17.06.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2021/145

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 02.06.2021թ. թիվ 26/26-1/8855-2021 գրությամբ «Կամի գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևանի քաղաքապետարանի 25.05.2021թ. թիվ 01/61-12066 գրության հիման վրա, 02.06.2021թ. թիվ 26/26-1/8855-2021 գրությամբ նախաձեռնել է «Կամի գրուպ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Կամի գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Կամի գրուպ» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

«Կամի գրուպ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/145 ընթացակարգի շրջանակներում 11.06.2021թ. ժամը 09:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>Երևանի քաղաքապետարանի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

Երևանի քաղաքապետարանը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 25.05.2021թ. թիվ 01/61-12066 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Երևանի քաղաքապետարանի և «Կամի գրուպ» ՍՊԸ-ի միջև 15.01.2021թ. կնքված «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-21/34» ծածկագրով գնման պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ «Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N1 Հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը և վճարել դրա համար»:

Պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո, պայմանագրի շրջանակներում կողմերի միջև 11.02.2021թ. կնքվել է լրացուցիչ համաձայնագիր, որի շրջանակներում Ընկերության կողմից կատարվել է ընդամենը 351 հատ սննդի փաթեթի մատակարարում, 140400 ՀՀ դրամ գումարի չափով:

Պայմանագրի 8.16 կետով սահմանված պայմանագրով նախատեսված պատվիրատուի իրավունքներն ու պարտականությունները ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնող Երևանի քաղաքապետարանի «h 175 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ը էլեկտրոնային փոստի միջոցով և հեռախոսազանգերով բազմիցս դիմել է Ընկերությանը՝ տեխնիկական բնութագրով նախատեսված ապրանքները մատակարարելու համար, սակայն համապատասխան քայլեր չեն ձեռնարկվել, իսկ 11.05.2021թ. Ընկերությանը տեղեկացվել է պարտականությունները չկատարելու դեպքում պայմանագրով

նախատեսված պատասխանատվության միջոցներ կիրառվելու մասին:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատաքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Պայմանագրի 2.1.7.1 կետի բ ենթակետի համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 1 օրից ավելի: Պայմանագրի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցը սահմանող թիվ 1 հավելվածով սահմանվում է, որ մատակարարումն իրականացվում է յուրաքանչյուր աշխատանքային օր:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի ա ենթակետի պահանջներով, առաջարկում եմ Մասնակցի նկատմամբ կիրառել Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով սահմանված դրույթը»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/145 ընթացակարգի շրջանակներում 11.06.2021թ. ժամը 09:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2021/145 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2021/145 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Երևանի քաղաքապետարանի և «Կամի գրուպ» ՍՊԸ-ի միջև 15.01.2021թ. կնքվել է թիվ «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-21/34» ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագիր (հետայսու նաև՝ Պայմանագիր), որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվել է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով, նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. Պայմանագրին կից հավելված N 1-ի՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի, համաձայն՝ «Սննդի փաթեթ» ապրանքի մատակարարումը պետք է իրականացվի յուրաքանչյուր աշխատանքային օր, իսկ վերջնաժամկետը սահմանվել է 2021թ. դեկտեմբեր ամսվա վերջին աշխատանքային օրը ներառյալ:

3. Կողմերի միջև Պայմանագրի շրջանակներում 11.02.2021թ. կնքվել է N 1 Համաձայնագիրը, որի համաձայն նախատեսվել են ֆինանսական միջոցներ:

4. Երևանի քաղաքապետարանի «Հ 175 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ը, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի գնումների վարչության պետին ուղղված 17.05.2021թ. թիվ 76 գրությամբ, հայտնել է հետևյալը.

«Երևանի քաղաքապետարանի և «Կամի գրուպ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) միջև 15.01.2021թ. կնքված «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-21/34» ծածկագրով սննդային փաթեթների մատակարարման գնման պայմանագրի համաձայն Երևանի քաղաքապետարանի «Հ 175 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ին պետք է մատակարարվեր թվով 5500 հատ սննդային փաթեթ: Նշված պայմանագրի հավելված 1-ով սահմանված է, որ ապրանքները պետք է մատակարարվեն յուրաքանաչյուր աշխատանքային օր՝ համաձայն պայմանագրով ներկայացված սննդի ցանկի: Մինչ օրս ժամկետի խախտումներով մատակարարվել է ընդամենը 351 փաթեթ 140400 գումարի: Մեր կողմից 25.02.2021թ գրությամբ և բազմաթիվ հեռախսոազանգերի միջոցով դիմել ենք Ընկերության կողմից այժմ ընդհանրապես չի մատակարարվում պայմանագրով նախատեսված ապրանք, ավելին, մեր հեռախոսազանգերին չեն պատասխանում: 11.05.2021թ. գրությամբ ընկերությունը տեղեկացվել է պարտավորությունները չկատարելու համար պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցների վերաբերյալ:

Հաշվի առնելով վերոգրյալը, առաջարկում ենք նշված պայմանագրի 2-րդ մասի 2.1.7 կետի բ ենթակետի համաձայն միակողմանի մասնակի լուծել պայմանագիրը մնացորդային 2059600 գումարի չափով և որպես պայմանագրային

պարտավորությունների պատշաճ կատարման ապահովում ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումներով գանձել համապատասխան գումարները»:

5. Երևանի քաղաքապետարանը «Կամի գրուպ» ՍՊԸ-ին ուղղված 21.05.2021թ. թիվ 01/61-11822 գրությամբ, հայտնել է հետևյալը.

«Երևանի քաղաքապետարանի և «Կամի գրուպ» ՍՊԸ-ի միջև 15.01.2021թ. կնքված «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-21/34» ծածկագրով գնման պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ «Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N1 Հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը և վճարել դրա համար»:

Պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո, պայմանագրի շրջանակներում կողմերի միջև 11.02.2021թ. կնքվել է լրացուցիչ համաձայնագիր, որի շրջանակներում Ընկերության կողմից կատարվել է ընդամենը 351 հատ սննդի փաթեթի մատակարարում, 140400 ՀՀ դրամ գումարի չափով:

Պայմանագրի 8.16 կետով սահմանված պայմանագրով նախատեսված պատվիրատուի իրավունքներն ու պարտականությունները ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնող Երևանի քաղաքապետարանի «h 175 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ը էլեկտրոնային փոստի միջոցով և հեռախոսազանգերով բազմիցս դիմել է Ընկերությանը՝ տեխնիկական բնութագրով նախատեսված ապրանքները մատակարարելու համար, սակայն համապատասխան քայլեր չեն ձեռնարկվել, իսկ 11.05.2021թ. Ընկերությանը տեղեկացվել է պարտականությունները չկատարելու դեպքում պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ կիրառվելու մասին:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատաքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ

որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետի համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 1 օրից ավելի: Պայմանագրի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցը սահմանող թիվ 1 հավելվածով սահմանվում է, որ մատակարարումն իրականացվում է յուրաքանչյուր աշխատանքային օր:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընկերությունը խախտել է պայմանագրով սահմանված պարտավորությունները՝ Երևանի քաղաքապետարանը, ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, միակողմանի, մասնակի, պայմանագրի մնացորդային քանակի մասով, հրաժարվում է կնքված պայմանագրից՝ համարելով այն 2059600 ՀՀ դրամ գումարի չափով լուծված և պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները»:

7. Պատվիրատուի կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում (հետայսու նաև՝ Տեղեկագիր) 24.05.2021թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի մասնակի լուծելու մասին ծանուցումը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 02.06.2021թ. թիվ 26/26-1/8855-2021 գրությունը, Երևանի քաղաքապետարանի 25.05.2021թ. թիվ 01/61-12066 գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (հետայսու նաև՝ Օրենսգիրք) 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ

այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար ***պատասխանատու է մեղքի առկայության դեպքում***, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով

նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպես, Երևանի քաղաքապետարանի և «Կամի գրուպ» ՍՊԸ-ի միջև 15.01.2021թ. կնքվել է թիվ «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-21/34» ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագիր, որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվել է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով, նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրին կից հավելված N 1-ի՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի, համաձայն՝ «Սննդի փաթեթ» ապրանքի մատակարարումը պետք է իրականացվի յուրաքանչյուր աշխատանքային օր, իսկ վերջնաժամկետը սահմանվել է 2021թ. դեկտեմբեր ամսվա վերջին աշխատանքային օրը ներառյալ:

Կողմերի միջև Պայմանագրի շրջանակներում 11.02.2021թ. կնքվել է N 1 Համաձայնագիրը, որի համաձայն նախատեսվել են ֆինանսական միջոցներ:

Երևանի քաղաքապետարանի «Հ 175 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ը, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի գնումների վարչության պետին ուղղված 17.05.2021թ. թիվ 76 գրությամբ, հայտնել է հետևյալը.

«Երևանի քաղաքապետարանի և «Կամի գրուպ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) միջև 15.01.2021թ. կնքված «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-21/34» ծածկագրով սննդային փաթեթների մատակարարման գնման պայմանագրի համաձայն Երևանի քաղաքապետարանի «Հ 175 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ին պետք է մատակարարվեր թվով 5500 հատ սննդային փաթեթ: Նշված պայմանագրի հավելված 1-ով սահմանված է, որ ապրանքները պետք է մատակարարվեն յուրաքանաչյուր աշխատանքային օր՝ համաձայն պայմանագրով ներկայացված սննդի ցանկի: Մինչ օրս ժամկետի խախտումներով մատակարարվել է ընդամենը 351 փաթեթ 140400 գումարի: Մեր կողմից 25.02.2021թ գրությամբ և բազմաթիվ հեռախսոազանգերի միջոցով դիմել ենք Ընկերության կողմից այժմ ընդհանրապես չի մատակարարվում պայմանագրով նախատեսված ապրանք, ավելին, մեր հեռախոսազանգերին չեն պատասխանում: 11.05.2021թ. գրությամբ ընկերությունը տեղեկացվել է պարտավորությունները չկատարելու համար պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցների վերաբերյալ:

Հաշվի առնելով վերոգրյալը, առաջարկում ենք նշված պայմանագրի 2-րդ մասի 2.1.7

կետի բ ենթակետի համաձայն միակողմանի մասնակի լուծել պայմանագիրը մնացորդային 2059600 գումարի չափով և որպես պայմանագրային պարտավորությունների պատշաճ կատարման ապահովում ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումներով գանձել համապատասխան գումարները»:

Երևանի քաղաքապետարանը «Կամի գրուպ» ՍՊԸ-ին ուղղված 21.05.2021թ. թիվ 01/61-11822 գրությամբ, հայտնել է հետևյալը.

«Երևանի քաղաքապետարանի և «Կամի գրուպ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) միջև 15.01.2021թ. կնքված «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-21/34» ծածկագրով գնման պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ «Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N1 Հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը և վճարել դրա համար»:

Պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո, պայմանագրի շրջանակներում կողմերի միջև 11.02.2021թ. կնքվել է լրացուցիչ համաձայնագիր, որի շրջանակներում Ընկերության կողմից կատարվել է ընդամենը 351 հատ սննդի փաթեթի մատակարարում, 140400 ՀՀ դրամ գումարի չափով:

Պայմանագրի 8.16 կետով սահմանված պայմանագրով նախատեսված պատվիրատուի իրավունքներն ու պարտականությունները ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնող Երևանի քաղաքապետարանի «h 175 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ը էլեկտրոնային փոստի միջոցով և հեռախոսազանգերով բազմիցս դիմել է Ընկերությանը՝ տեխնիկական բնութագրով նախատեսված ապրանքները մատակարարելու համար, սակայն համապատասխան քայլեր չեն ձեռնարկվել, իսկ 11.05.2021թ. Ընկերությանը տեղեկացվել է պարտականությունները չկատարելու դեպքում պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ կիրառվելու մասին:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատաքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել

գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետի համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 1 օրից ավելի: Պայմանագրի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցը սահմանող թիվ 1 հավելվածով սահմանվում է, որ մատակարարումն իրականացվում է յուրաքանչյուր աշխատանքային օր:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընկերությունը խախտել է պայմանագրով սահմանված պարտավորությունները՝ Երևանի քաղաքապետարանը, ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, միակողմանի, մասնակի, պայմանագրի մնացորդային քանակի մասով, հրաժարվում է կնքված պայմանագրից՝ համարելով այն 2059600 ՀՀ դրամ գումարի չափով լուծված և պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները»:

Պատվիրատուի կողմից Տեղեկագրում 24.05.2021թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի մասնակի լուծելու մասին ծանուցումը:

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ ***մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:***

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը:

Պայմանագրի 2.1.7.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողի կողմից կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել

Գնորդի համար ընդունելի ժամկետում,

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են ***1 օրից*** ավելի:

Պայմանագրի 6.6 կետի համաձայն՝ Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ «Կամի գրուպ» ՍՊԸ-ն խախտել է իր և Երևանի քաղաքապետարանի միջև 15.01.2021թ. կնքված Պայմանագրով ստանձնած պարտավորությունները, ինչի արդյունքում Ընկերությունը թույլ է տվել Պայմանագրի էական խախտում, որն էլ իր հերթին հանգեցրել է Պատվիրատուի կողմից Պայմանագրի միակողմանի լուծման:

Ելնելով վերոգրյալից՝ գտնում եմ, որ Ընկերությունը թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված խախտում, ուստի առկա են «Կամի գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 02.06.2021թ. թիվ 26/26-1/8855-2021 գրությամբ «Կամի գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Կամի գրուպ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**